է ենթարկել մանրէները և որդերը, և սոնց սերմերը՝ սպանող կազերու կամ թունաւոր աղեր բովանդակող ալքոհլական լուծումներու սրսկումին։ Այս գործողու թիւնը բուսաբանին կ'իմնայ ընել տալ, և ոչ բոյսեր ժողվողին։

ԺԴ. — Շատ բոյսերու տերևները կը գունատին կամ կը սևնան իրենց բովանդակած թթուներուն պատճառաւ. բայց պէտք չէ կարծել որ անոնք աւրուած բոյսեր են։ Մենք սիրով կ'ընդունինք որ և է ոճով պատրաստուած բոյսեր, միայն թէ անոնք սոսկ ծաղիկ մը կամ մի քանի տերևներ չըլլան, այլ կամ ամբողջութեամբ՝ երբ չափազանց խոշոր չեն՝ և կամ գեղեցիկ ճիւղ մը՝ որուն երկայնութիւնը կէս մեդրը պէտք չէ անցնի։ Մի և նոյն խոտեղէն կամ ծաղկաւոր և կամ գաղտասեր բոյսերէն միշտ ջանալու է կատարեալ օրինակներ հաւաքել, այս ինքն թէ ունենան արմատներ, ծաղիկներ, տերևներ, ցողուններ, սերմեր կամ պտուղներ, և այլն։

ԺԵ. — Ջորցած բոյսերը մի առ մի պէտք է մաքուր թղթերու մէջ կամ մեծադիր տետրակի մէջ գետեղել, իւրաքանչիւր տունկին ընկերացնելով թուղթ մը վրան կարևոր տեղեկութիւններ գրուած։ կամ ամէն բոյսի պէտք է միացնել վրան 1. 2. 3. և այլն թուանշաններ գրուած թղթիկներ, ապա առանձին նամակով գրել թէ 1. 2. 3. և այլն թիւերն ունեցող բոյսերու ժողովրդական անուններն որոնք են, ինչ տեսակ երկիրներէ ժողվուած են, որ թուականին, ինչ գործածութիւն ունի, և այլն, որ և է տեղեկութիւններ գրել եթէ բուսահաւաքը գիտէ։ Այսոնք մեծապէս կը նպաստեն ուսումնասիրող անձին։

ԺԶ. — Ցեղոյ մը տարեկան ընթացքի միջոց արտադրած բոյսերը հաւաքելու համար, հարկ է գարնան, ամառը և աշնան՝ առանձին առանձին գոնէ երեք անգամ նոյն տեղոյն տունկերը բուսաքաղել, վասն զի կան բոյսեր որ աշնան միայն ծաղիկներ կու տան և գարնան տերևներ և կամ ասոր հակառակը, և այլն։

Հաւաքուած բոյսերը թղթատարական ծրարով (colis postal) և կամ թէ իբրև բեռ մը՝ փայտէ կամ թանաքէ տուփի մէջ ամփոփելով և վրան լաթ կարելով ու կնքելով պէտք է ուղղել՝ S. Lazare Venise (Italie) մեր հասցէին, վասն զի եթէ իբր նմուշ (échantillon) ուզուի ղրկել, թղթատարը 300 կրամէ աւելի մեծ ծրար չ'ընդունիր և թէ անոր երկայնութիւնը և լայնութիւնը 25 սանտիմեդրէ աւելի չի կրնար ըլլալ։ Բոյսերու առաքման համար երբ մեզմէ ճանապարհածախս պահանջուի՝ սիրայօժար կը վճարենք։

Մեր ծրագրած աշխատասիրութիւնը յաջողութեամբ աւարտելու համար, անհրաժեշտ է Հայրենի երկրի մէջ գտնուող և բարի տրամադրութիւն ունեցող և հմուտ անձերու աջակցութիւնն ունենալ՝ որոնց արդիւնքը անվրէպ կը ցուցադրուի և կը հրատարակուի մեր գրութեանց մէջ, և յղուած բոյսերը իրենց անուամբ կը պահուին մեր նորահաստատ Հայկական Բուսարանին մէջ։ Քաղցր է մեզ յուսալ թէ այս 1909ի մէջ շատ աւելի բազմաթիւ տունկեր պիտի ստանանք՝ քան անցեալ երկու տարիները, որով մենք ալ դեռ աւելի պիտի խրախուսուինք մեր ձեռնարկին մէջ յարատևել և յաչս Եւրոպացւոց հայութեան պատուաբեր աշխատասիրութիւններ պատրաստել։

Հ. Ներսէս Տ.

Ամէն մեծանոգի անձանց գաղտնիքը՝ յատուկ բանին մէջ կը կայանայ (Կիկերոն)։

Իմաստուն է նա՝ որ օգտակար բաներ գիտէ. չէ նա՝ որ շատ բաներ գիտէ։

Անանմնականաց ջանքը՝ հասարակաց յառաջադիմութիւն կը պատճառէ։

Ամէն բանէ աւելի՝ վատանուն ըլլալէ վախցիր։

Ազնուութիւնը՝ ծնանելով չի ստացուիր՝ այլ ապրելով (Փէդրարքայ)։

Ցոռին կ'ընտրուի ուր չիք ծանօթութիւն լաւին. եւ լաւն՝ ուր անծանօթ է լաւագոյնը (Հ. Վ.)։

digitised by A.R.A.R.@